ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՎԵՂԱՐԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(30 օգոստոսի, կիրակի, 1998 թ.)

Օգոստոս 30, կիրակի, 1998 թ.:

Այսօր Մայր Աթոռ Ս. Էջմիածնում, Ավագ Ս. Սեղանի վրա, Սուրբ Պատարագ մատուցեց Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը:

Հընթացս մատուցվող Պատարագի, ձեռամբ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանի և խարտավիլակությամբ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանի, քահանայական ձեռնադրություն և օծում ստացան Սևանի Վազգենյան Հոգևոր դպրանոցի, ապա նաև Ս. Էջմիածնի Հոգևոր Ճեմարանի նախորդ տարվա շրջանավարտ ութ շնորհալի սարկավագներ՝ Արմեն սրկ. Մարկոսյանը, Հարություն սրկ. Կարապետյանը, Արտակ սրկ. Լոռեցյանը, Ադամ սրկ. Տոնիկյանը, Արարատ սրկ. Չոփուրյանը, Հարություն սրկ. Սարիբեկյանը, Հրանտ սրկ. Պետրոսյանը և Արմեն սրկ. Խաչատրյանը:

Նախորդ օրը, օգոստոսի 29-ին, հետ երեկոյան ժամերգության, տեղի ունեցավ քահանայական կոչման ընծայում: Ընծայյալները առ դուռն Ս. Եկեղեցվո ծնրադրյալ մոտենում են ձեռնադրող Սրբազան Հորը՝ «Նայեաց ի մեզ եւ ողորմեաց մեզ Քրիստոս որ ունիս բազում գթութիւն» շարականի երգեցողության ներքո: Խարտավիլակ Հայր Սուրբի՝ Տ. Մակար աբեղա Հովհաննիսյանի «Հրամայեա Տէր, օրհնութեամբ ասել» ազդարարությունից հետո ձեռնադրող Սրբազանը երկնային ուրախությունն ու օրհնությունն է բաշխում ընծայալներին: Ապա կատարվում է հավատքի հրապարակային քննություն: Ընծայալները մերժում են հերետիկոսությունն ու հերձվածողությունը, նգովում և խոստանում հետևել մեր Սրբազան Հայրապետների լույս հավատքին, հայտնում են իրենց պատրաստակամությունը աշակերտելու և հետևելու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու կանոններին: Ապա ձեռնադրող Սրբազանի հրամանով ընծայյալները բարձրաձայն կարդում են Ս. Գրիգոր Տաթևացու հավատամքը, որը և լինում է նրանց դավանության հայտարար արտահայտությունը առաջի աստվածընկալ Ս. Սեղանի, ձեռնադրող Սրբազան Հոր, միաբան եղբայրների և ներկա ժողովրդի:

Քահանայական կոչման արարողությունն ավարտվում է «Պահպանիչ»-ով և «Տերունական աղոթք»-ով:

Կիրակի օրը, օգոստոսի 30-ին, Մայր Տաճարում, Ավագ Ս. Սեղանի վրա, մատուցվում է Ս. Պատարագ: Օրվա պատարագիչն է ձեռնադրող Սրբազան Հայրը՝ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպս. Ներսիսյանը: «Զի ողորմած և մարդասերդ ես»-ից հետո Մայր Աթոռի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը և խարտավիլակ Հայր Սուրբը՝ բեմից իջնելով, ԻԴ սաղմոսի «Դատ արա ինձ Տէր» փոխնիփոխ ընթերցմամբ ութ ընծայացուներին ծնրադրյալ հրավիրում են դեպի Ավագ Ս. Խորան՝ առ ոտս ձեռնադրող

եպիսկոպոսին, և խարտավիլակը եկեղեցու անունից խնդրում է սարկավագներին տալ քահանայական ձեռնադրություն: Եպիսկոպոսը, տալով իր հավանությունը, տեառնագրում է նրանցից յուրաքանչյուրին ասելով. «Ընկալցի զքեզ Տէր», որից հետո նորընծայյալները դեմքով դառնում են առ ժողովուրդը կնքելով իրենց ուխտը նրանց առջև «և նա զձեռսն ի վեր ունի ապ ի բաց ի ձև հրաժարման»: Իր հերթին դպրաց դասը երգում է «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը: Հրաժարման պահից և «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականից հետո նորընծաները ծնրադիր մոտենում են Սրբազան Հորը, և նա իր ձեռքը դնելով նրանցից յուրաքանչյուրի գլխին՝ արտասանում է. «Ես դնեմ զձեռս ի վերայ սորա, և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան» աղոթքը: Նորընծաներին շնորհվում է փիլոն, շուրջառ, սաղավարտ կրելու իրավունք: «Խորհուրդ խորին» շարականի երգեցողության ընթացքում փակվում է վարագույրը, և նորընծաները զգեստավորվում են:

Սուրբ Պատարագը շարունակվում է մինչև «Ողջոյն տուք միմեանց» քարոզը: Ապա «Սեծաւ երկիւղիւ» և հանդիսավորապես Ս. Խորան է բերվում սրբալույս մեռոնը: Պատարագիչ Սրբազան Հայրը սկսում է մեկ առ մեկ օծել ընծայացուների ճակատը, աջ և ձախ ձեռքերը՝ վերանվանելով նրանց ըստ կարգաց և կանոնաց Հայաստանյայց Եկեղեցվո՝ Արմեն սրկ Մարտիրոսյան՝ Տ. Զավեն, Հարություն սրկ. Կարապետյան՝ Տ. Կարապետ, Արտակ սրկ. Լոռեցյան՝ Տ. Գառնիկ, Ադամ սրկ. Տոնիկյան՝ Տ. Թորգոմ, Արարատ սրկ. Չոփուրյան՝ Տ. Սարգիս, Հարություն սրկ. Սարիբեկյան՝ Տ. Սկրտիչ, Հրանտ սրկ. Պետրոսյան՝ Տ. Գաբրիել, Արմեն սրկ. Խաչատրյան՝ Տ. Հակոբ:

Անտարակույս ավելի խորհրդավոր, հոգեկան ավելի բարձր մթնոլորտ չի կարող լինել հոգևորականի համար, քան այն պահը, երբ սրբալույս մեռոնով օծվում է իր ճակատը՝ նոր մարդ դառնալու, վերստին ծնվելու, հավատով և ճշմարիտ գիտակցությամբ:

Ապա Սրբազան Հայրն աղոթքով օծյալներին է փոխանցում սկիհը, ի նշան պատարագելու և Ամենակարող Տիրոջ փրկարար մարմինն ու արյունը բաշխելու իրավունքի, որից հետո հրավիրում է նորաօծ քահանաներին՝ իրենց անդրանիկ օրհնությունը բաշխելու ժողովրդին:

Օծման արարողությունից հետո պատարագիչ Սրբազանը հավուր պատշաճի քարոզ է խոսում:

Սուրբ Պատարագն ավարտվում է «Հայրապետական մաղթերգ»-ով: Նորաօծ քահանաներին հերթով մոտենում է Մայր Տաճարում ներկա գտնվող ողջ հավատավոր ժողովուրդը և մեկ առ մեկ համբուրում նրանց մյուռոնաօծ ձեռքերը:

Նույն օրը, երեկոյան ժամերգությունից հետո, կատարվում է նորընծա Թորգոմ Տոնիկյանի վեղարի տվչությունը և աբեղայական օրհնությունը՝ «Օրհնություն աբեղայի» կամ «Օրհնություն վեղարի» կարգը, որի ընթացքում հավուր պատշաճի աղոթքների ընթերցումից և շարականների երգեցողությունից հետո ձեռնադրող Սրբազանը հայտարարում է, թե «Հանցէ Աստուած զհին մարդն գործովք իւրովք», ապա Տ. Թորգոմ աբեղան կրում է վեղարը՝ ի նշան կուսակրոն քահանայության:

Սուրբ Պատարագին ներկա էին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Ա Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետը, Մայր Տաճարի լուսարարապետ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանը, Դիվանապետ Տ. Ներսես արքեպս. Պոզապալյանը, Տ. Հովնան արքեպս. Տերտերյանը, Տ. Շահե արքեպս. Աճեմյանը, Տ. Արսեն արքեպս. Պերպերյանը, Տ. Մեսրոպ արքեպս. Աշճյանը, Տ. Հայկազուն ծ. վրդ. Նաջարյանը, Մայր Աթոռի միաբաններ, հյուրեր, մեծաթիվ հավատացյալներ:

***

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ - «Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ևս շնորհավորում է Տ. Թորգոմ աբեղա Տոնիկյանին, Տ. Զավեն քհն. Մարկոսյանին, Տ. Կարապետ քհն. Կարապետյանին, Տ. Գառնիկ քհն. Լոռեցյանին, Տ. Սարգիս քհն. Չոփուրյանին, Տ. Մկրտիչ քհն. Սարիբեկյանին, Տ. Գաբրիել քհն. Պետրոսյանին, Տ. Հակոբ քհն. Խաչատրյանին մաղթելով, որ նրանք իրենց եկեղեցանվեր ապագա գործունեությամբ միշտ բարձր պահեն հայ հոգևորականի նվիրական կոչումը՝ լինելով «Ծառա բարի» և «Հովիվ քաջ», սպասավորելով Հայաստանյայց Առաքելական Մայր եկեղեցուն և Հայրենիքից հեռու ապրող մեր ազգի զավակներին:

ՄՈՒՇԵՂ ՍՐԿ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ